


2697



1750

ՀՐԱՀԱՆԳ

ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԵԱՆ



ՀՐԱՀԱՆՔ

ԳԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ

2697



ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Խոստնդիուպոլիս

40 Մայիս 1893

ԴԻՒԱՆ ԽԱՌՆ ԺՈՂՈՎՈՅ

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



Համար 282

Դերակասիւ Միւելի

ՆԱԽԱԳԱՅ ԴԱՏԱՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

Խառն ժողովն Դատաստանական Խորհրդոյ կողմէ
ծրագրեալ դատավարական նրանանցն իւր մէջէն կազմ-
եալ Յանձնախմբի մը բննուրեան յանձնած եւ Յանձնա-
խումբն կատարելով այս աշխատաքիւնն՝ բարեփոխեալ
նրանանց մը ներկայացուցած էր :

Խառն Ժողովն իւր ապրիլ 21 ի նիստին մէջ Դա-
տաստանական Խորհրդոյ դիմանին ներկայութեան յօդուած
առ յօդուած ընթեռնելով բարեփոխեալ նրանանցն՝ ի նին
առաւ, եւ բանի մը յաւելմամբ ընդունելով հաստատեց
եւ որուեց գործադրութիւնը :

Արդ՝ ընդ գրոյս կը հապուղեամբ Զեզ նոյն նրանունցին
վաւերացեալ մէկ օրինակն, եւ կը յանձնաւառեամբ որ
Դատաստանական Խորհրդոյ կողմէ անթերի գործադրու-
թեան դրուի դատավարական գործոց մէջ :

Աղջ Դեր ՚ի Տեր

ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՈԼՍՈՅ

Խ Ո Բ Կ Ն

2697

ՀՐԱՀԱՆԳ

Դատավարութեան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Յօդուած 1. Պատրիարքարանի ձեռնհասութեան պատկանեալ ամեն գատ և . Պոլսոյ մէջ Կեդր . Վարչութեան և գաւառներու մէջ Գառական Վարչութեան Դատաստանական Խորհրդոց մէջ նախապէս կը քննուի և կը վճռուի :

Յօդ . 2. Դատաստանական Խորհրդոց մէջ տեսնուած դատեր տեղւոյն վարչութեան Խառն ժողովոյ մէջ կը վերաբննուին . Դատաստանական Խորհրդոյ վճիռներու վերաբննութիւնը երկու կողմերէ մէկուն գրաւոր խնդրանաց վրայ կը կատարուի : Բայց Արքազան Պատրիարքն ի հարկին կը համայել որ այն վճիռ վերաբննուի Խառն ժողովոյ մէջ : Դաւառներու մէջ այս հրամանը կը տրուի Առաջնորդին կամ Փոխանորդին կողմէ :

Յօդ . 3. Դատաստանական Խորհրդոց և Խառն Ժողովոյ կողմանէ ի բացակայութեան տրուած

որոշումները կրկին անդամ կը քննուին նոյն Խորհրդոյ կամ ժողովոյ մէջ եթէ բացակայ եղող կողմը որոշեալ ժամանակին իր դիտողութիւնը մատուցանէ։ Այս երկրորդ անդամուան որոշումը եթէ Խառն ժողովոյ կողմէն տրուած է, վերջնական է, իսկ եթէ Դատաստանական Խորհրդոյ կողմէն է՝ կրնայ վերաբնուիլ։

Յօդ. 4. Բոլոր խնդիր գրաւորապէս կը ներկայանայ վերոնշանակեալ ատեաններուն կառավարութեան կողմէ յանձնաբարեալ արզուհաղով և կամ ի Պողիս Պատրիարքական Փոխանորդին և ի գաւառս Առաջնորդայ կամ Փոխանորդայ կողմէ մակագրեալ խնդրագրութ։ Խնդրագրերուն մէջ երկու կողմին անունը, մականունը, բնակութիւնը և հպատակութիւնը, ինչպէս նաև խնդրուած բանին ինչ ըլլալը, և եթէ դրամ է քանակութիւնը, և եթէ ուրիշ արժեքաւոր նիւթ կամ օժիտ է, անոնց արժեքը և այլն բացայայտ գրուած պէտք է ըլլայ։

Յօդ. 5. Երկու կողմանք կրնան իրենց դատին պաշտպանութեան համար փոխանորդ կարգել, իսկ դատարանը ուղած ժամանակ կրնայ անձամբ հարցարններ երկու կողմերը։

Յօդ. 6. Կինը կարող է իւր ամուսնոյն դէմ դատ բանալ ընտանեկան բնակավայրին կամ ամուսնոյն դանուած տեղոյն դատարանին առջեւ,

իսկ այրը պարտաւոր է ընտանեկան բնակավայրին Դատաստանական Խորհրդոյ առջեւ դատ բանալ։

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Յօդ. 7. Խորհրդոց և ժողովոց նիստի օրերը լրագրաց մէջ հրատարակուած կամ Փոխանորդարանաց և Առաջնորդարանաց բակը կախուած ծանուցմամբ կը յայտարարուին։

Յօդ. 8. Ցիշեալ ժողովները ամուսնական կամ անկէ ծագում առած դրամական խնդրայ համար չորս տումար պէտք է ունենան։

Ա. Կոչնագրերու տումար, կամ եթէ կոչնագրերը տպեալ են, անոնց բուները, որ պէտք է պարունակէ կոչնագրերուն թուականը, բարապանին անունը, դատարանին որոշեալ օրը և խնդրագրոյն համառօտ պարունակութիւնը։

Բ. Խնդրագրերու տումար, որ ժողովին յըլուած բոլոր խնդրագրերու կամ պաշտօնագրերութուականը, երկու կողման անունը, մականունը, ընակութիւնը, հպատակութիւնը, և բարապանին անունը և մականունը, գրին համառօտութիւնը և ժողովին գալուն թուականը թուահամարներու կարգով պիտի նշանակուին։

Գ. Որոշումներու տումար, ուր ամեն խնդրոց արուած որոշումները համառօտիւ պիտի նշանակ-

ոին և ժողովականներու կողմէ ստորագրուին:

Դ. ՎՃՌԱԳՐԵՐՈՒ ՏՈՒՄԱՐԻ, ուր տրուած վճիռները ամբողջովին կարձանագրուին:

Յօդ. ❾. Այս տումարները պէտք է կազմուած և ամեն մէկ երեսը գրաւոր կերպիւ թուանշանակեալ և կեդրոնական կամ Պաւառական Վարչութեանց կողմէ կնքուած ըլլան և ամեն տումարին քանի երեսէ բազկացած ըլլալը տումարին սկիզբը և վերջը գրաւորապէս նշանակուած և կնքուած ըլլայ: Անոնցմէ զատ ամեն վեց ամիս նախագահին կողմէ պէտք է տումարները քննուելով վաւերացուին և նորէն շարունակուին, վճռագիրներու տումարին մէջ արձանագրուած վճիռները սրբագրուածին յար և նմանը ըլլալուն գիւնապեաը ստորագրութեամբ հաստատելէն վերջ, բոլոր անդամնց ստորագրութեամբ պիտի վաւերացուին: Երկու վճիռներու արձանագրութեան մէջտեղը միայն երկու տաղէն աւելի կամ նուազ պարապ ըլպիտի ձգուի, նաև լուսանցքի կամ տողի մը վրայ բառ մը աւելցնել և կամ գրել կամ սրբել արդիլեալ է. Եթէ սխալմամբ աւելի կամ պակաս գրուած է՝ յայնժամ Ատենապետին և Ատենադպրին ստորագրութեամբ պէտք է աւելցնել կամ պակասեցնել:

Յօդ. ❿. ՎՃԻՌՆԵՐՈՒ արձանագրութեանց, ինչպէս և այլ պաշտօնագրերու, խնդրագրերու կամ փաստի վերաբերեալ թուղթերու օրինակը

կրնայ տրուիլ երկու կողմերուն եթէ խնդրուի և տրուելուն մէջ անտեղութիւն չըլլայ:

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՔ

Յօդ. ❻. Կոչնագրերը երկու օրինակ կը գըրտին, և պատկանեալ Ատենին կողմէ կը կնքուին, մէջը՝ գրուելուն թուականը, երկու կողմին անունը, մականունը, և դատին տեսնուելու օրը և ժամը նշանակուած պէտք է ըլլայ:

Յօդ. ⠁⠁. Բարապանը կոչնագրին մէկ օրինակը հրաւիրեալ անձին կը հաղորդէ բնակած թաղին թաղական Խորհուրդներու ձեռամբ: Եթէ հրաւիրեալ անձին գտնուած տեղը թաղական Խորհուրդ չկայ, կոչնագրերը կը հաղորդուի տեղուոյն Միսթարին ձեռամբ:

Յօդ. ⠁⠚. Եթէ հրաւիրեալ անձը ուրիշ գաւառ կը բնակի, հրաւիրագիրը կ'ուղղուի նոյն տեղուոյն Առաջնորդին կամ Փախանորդին որ ըստ նախորդ յօդուածի տրամադրութեան կը հաղորդէ կոչնագիրը:

Յօդ. ⠁⠔. Հեռաւոր տեղ գտնուող անձանց դրկուելիք կոչնագրերու պայմանաժամը պէտք է երկարել իւրաքանչիւր 6 ժամուն համար մէկ օր հաշուելով. իսկ խիստ հեռի տեղ եղող անձանց

համար դատարանը կորոշէ կոչնագրին պայմանա-
ժամը:

Յօդ. 15. Տեղը յայտնի չեղող անձին ուղ-
ղեալ կոչնագիրը լրագրաց միջոցաւ կը հրատա-
րակուի:

Յօդ. 16. Դատավարութիւնը դռնփակ կը-
լան. իսկ երկու կողմերու տաներէց քահանացից
ներկայութիւնը պարտաւորիչ է դատավարութեան
ժամանակ:

Յօդ. 17. Դատավարութեան ժամանակ Ատե-
նապետը կը կառավարէ Ատեանը և կը հսկէ կար-
գապահութեան, ինըը կը հարցաբնէ. Երկու կող-
մերը երես առ երես կամ ի հարկին զատ զատ, կը
լէ վկայները և ժողովին որոշումը կը հազորդէ. Մէկ
կողմին խօսած ժամանակ միւս կողմին խօսիլ
կամ ընդմիջել արգիլեալ է, անդամներէն մին
կրնայ Ատենապետին հաւանութեամբ հարցումներ
ուղղել երկու կողմերուն:

Յօդ. 18. Ատենապետին կողմանէ ուղղուած
երեք հարցմանց չղատասխանող կողմը իբր բա-
ցակայ կը նկատուի և անոր դէմ ըստ այնմ որո-
շում կը արուի:

Յօդ. 19. Վկայութիւններ բերելու կամ պաշ-
տօնական արձանագրութիւններէ ապացոյց ներ-
կայացնելու համար պատկանեալ կողմին հարկ ե-
ղած պայմանաժամը կը արուի, իսկ եթէ այս ար-

ձանագրութիւնք պէտք ըլլալով հանդերձ, երկու
կողմէն մէկը չը կարենայ զայնս ստանալ՝ ժողովը
ուղղակի պատկանեալ տեղէն պաշտօնագրով բե-
րել կու տայ:

Յօդ. 20. Եթէ ձեռնհամներու քննութեամբ
հասկցուելու կէտեր պատահին, ըստ հարկին ձե-
ռնհամներու կարծիքը կը հարցուի:

Յօդ. 21. Հետեւեալ պարագայներուն՝ Եթիւ
կողմէն մէկը կամ ամենը կրնան խնդրել որ ժողով
վոյ այս ինչ անդամը իրենց դատաստանին ձեռնի-
պահ մնայ:

Ա. Եթէ երկու կողմանց մէկուն հետ աղդա-
կանութիւն կամ մօտ խնամութիւն ունենայ:

Բ. Եթէ այդ անդամը ուղղակի կամ անու զ-
գակի խնդրոյն մէջ նիւթական շահ ունենայ.

Գ. Եթէ երկու կողմէն մէկուն հետ արդէն
անձնական վէճ մ'ունենայ.

Դ. Եթէ ներկայացեալ դատէն առաջ այդ
անդամին հետ արդէն դատարանի մը առջեւ առ-
կախ խնդիր մը ունեցած ըլլայ:

Այս տեսակ ձեռնպահ մնալու առաջարկ պէտք
է դրաւոր և վճիռ տրուելէ առաջ ներկայանայ
մի և նոյն Ատեանին որ զայն նկատողութեան առ-
նելով, եթէ հիմնաւոր դատէ, այն ժողովականին
ձեռնպահ մնալուն որոշում կու տայ. իսկ եթէ



անհիմն գտնէ, կը մերժէ խնդրագիրը և կը շարունակէ գատաստանը:

Յօդ. 22. Դատաստանական Խորհրդոյ մէջ արդէն կարծիք յայտնող ժողովականը վերաբննիչ Ատենին եթէ անդամակցի, ձեռնպահ պէտք է մնայ:

Յօդ. 23. Մէն մի խնդրոյ գատավարութեան ժամանակ ներկայ գտնուող ժողովականներուն ինչպէս նաև դատախազին, դատելիին և վկայներուն (եթէ կան) անունը և մականունը և երկու կողմին և վկայներուն յայտարարութիւնները և ներկայացեալ գրութեանց պարունակութիւնը գիւնադպիրը համառօտիւ կարձանագրէ ամեն գատին համար զատ բռնուած ատենագրութեան մէջ:

Յօդ. 24. Ներկայ եղող դատախազ կամ դատելի կողմերուն մէկը եթէ ժողովոյն անձամբ ծանօթ չէ, պէտք է անոնց նոյնութիւնը նախ ստուգել և ապա խնդրոյն քննութեան մտնել:

Յօդ. 25. Դատաստանական Խորհուրդներու կողմաննէ տրուած վճիռները խնդրոյն ամէն մասերը քննուելէն վերջը ի ՚. Պոլիս Ամեն. Արբագան Պատրիարքի և ի գաւառոս Առաջնորդաց կամ Փոխանորդաց կուղղուին տեղեկագրի ձեւով: Ներկայացեալ խնդրոյն մէն մի կէտին համար զատ զատ որոշում չը տրուիր, ուստի և անոնց դէմ վերաբննութիւն ամբողջ խնդրոյն քննուելէն և

որոշուելէն վերջը տրուելիք վճռագրին դէմ միայն կընայ ըլլալ:

Յօդ. 26. Եթէ Դատաստանական Խորհրդութը աեղեկանայ թէ իրեն ներկայացեալ դատը արդէն ուրիշ Դատաստանական Խորհրդոյ մը առջեւ կը քննուի, պէտք է սպասել սոյն Խորհրդոյ կողմանէ արուելիք որոշման:

Յօդ. 27. Դատը լսելէ և երկու կողմանց բացատրութիւնները առնելէ վերջ Ատենապետը դատավարութիւնը փակեալ կը հրատարակէ, յորմէ անմիջապէս ետքը երկու կողմը դուրս ելլելով եթէ որոշումը անմիջապէս կընայ տրուիլ, Ատենապետը խորհրդականաց կարծիքները կը ժողվէ և եթէ խորհրդակցելու հարկ տեմնուի, Ատենապետը ինդիքը կը պարզէ գատախազին՝ խնդրագրոյն և ապացոյցներուն ինչպէս նաեւ երկու կողմանց յայտարարութեանց համառօտ միտքը կը ըկ-նելով, եթէ կարելի ըլլայ, նոյնժամայն որոշումը կը տրուի և երկուց կողմանց կը հազորդուի. իսկ եթէ կարելի չըլլայ որոշման մը յանգիլ, ուրիշ որոշման կը ձգուի և երկու կողմանց կը հազորդուի. այդ որոշեալ օրը խնդիրը կը վճռուի եթէ մի և նոյն ժողովականները ներկայ լինին. հակառակ պարագային՝ այսինքն առաջին նստին ներկայ եղողներուն մէկուն կամ մէկ քանիին տեղ ուրիշ մը կամ ուրիշներ ներկայ եղած ժամանակ, նորերուն ներկայութեամբ երկու կողմերը լսու ելէն վերջը որոշում՝ կը տրուի:

— 14 —

Յօդ. 28. Որոշումները պէտք է պատճառաբանեալ և եկեղեցական օրինաց վրայ հիմնեալ լինին և 23^{րդ} յօդուածին մէջ յիշուած ատենագրութեան մէջ համառօտիւ նշանակուելէ վերջ պէտք է որոշման մասնակցող ժողովականաց կողմէն ստորագրուին. Համակարծիք չ'զող փոքրամասնութիւնը կրնայ իւր դիտողութիւնը գրելով ստորագրել.

Յօդ. 29. Տրուելիք որոշումները ամբողջ ժողովականաց միաձայնութեամբ կամ մեծամասնութեամբ, այսինքն կէսէն մէկ տւելիին կարծիքովը կըլլան: Կարծիքները երկու հաւասար մասի բաժնուած ժամանակ նախագահին և անոր բացակայութեան ժամանակ Ատենագետին կամ նորա փոխանորդին դանուած կողմը մեծամասնութիւն կը կազմէ:

Յօդ. 30. Եթէ երկու կողմէն մէկուն կամ վկայի մը երդում տալ հարկ տեսնուի, որ կէտերուն վրայ և ինչ կերպով ըլլուելիքը պէտք է կանխաւ որոշուի և բացայայտ կերպիւ գրի առնուելէ վերջ գործադրուի:

Յօդ. 31. Վնասուց հատուցում պահանջուած ժամանակ եթէ բուն ինդրոյն հետ քննուած և որոշուած չ'է, այս եւս առանձին որոշուելու համար վնասուց քանակութիւնը պարունակող հաշիւը կուզուի:

Յօդ. 32. Ստիպողական պարագայից մէջ որոշման առժամանակեայ գործադրութիւնը կրնայ վճռուիլ մի և նոյն աեղեկագրով:

Յօդ. 33. Դատաստանական ծախքերը դատապարտեալ կողմէն կը հատուցուին:

Յօդ. 34. Վճռագրերը առառաւելն տասն և հինգ օրէն պէտք է պատրաստուին:

Յօդ. 35. Վճռագրի վաւերացեալ օրինակը ի կ. Պոլիս Պատրիարքական Փոխանորդին և ի գաւառս Առաջնորդին կամ Փոխանորդին կողմանէ կը հաղորդուի դատապարտեալ կողմին՝ կոչնագրերու մասին նշանակուած եղանակին համեմատ:

Յօդ. 36. Վճռագրերը 28^{րդ} յօդուածին համեմատ տրուած որոշման յար և նմանը և պատճառաբանեալ պէտք է ըլլան և որոշման մասնակցող անդամոց կողմէն ստորագրուին: Երկու կողմին հաղորդուած պատճէններուն մէջ ստորագրութիւնները չ'են գրուիր և միայն իսկական պատճէնը ըլլալուն նախագահը կստորագրէ և Խորհրդոյ կնիքովը կը վաւերացնէ:

Յօդ. 37. Վկայութեան համար եկած անձերը զատ զատ և երկու կողմին ներկայութեամբ կը հարցաքննուին և անոնց վկայութիւնը իսկոյն արձանագրուելով իրենց ստորագրել կը տրուի:

Յօդ. ՅՅ. Եթէ ժողովով համոզում գոյացուի
որ երկու կողմէն մէկը կամ վկայ ցուցուած անձը
բանաւոր պատճառաւ անձամբ ժողովոյն չը պիտի
կարենայ ներկայանալ, այն ժամանակ Ատեանը
իւր անդամներէն մէկ կամ երկուքը դիւանադպի-
րով կուղարկէ այն անձին բնակարանը և պէտք
եղած հարցումները կընէ, պատասխանները իրեն
ստորագրել տալով:

Ի ԲԱՑԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՏՐՈՒԱԾ ՎՃԻՌՆԵՐ
ԵՒ ԱՆՈՆՑ ԴԷՄ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Յօդ. ՅՅ. Կոչնագրով հրաւիրեալ կողմերուն
երկուքն ալ եթէ որոշեալ օրը չը ներկայանան
Ատենին, այն ժամանակ մինչեւ որ մէկը գայ և
հակառակ կողմին նորէն կանչուիր խնդրէ, խըն-
դիրը կը յետաձգուի:

Յօդ. ՅՅ. Եթէ կոչնագիրը ստորագրող կողմը
որոշեալ օրը չը ներկայանայ և ներկայ եղող կողմը
ի բացակայութեան որոշում ուղէ, այն ժամանակ
եթէ այս բացակայութիւնը արգելիչ պատճառաւ
լինելուն ատեանը ինքնին համոզուի, խնդրոյն
քննութիւնը ուրիշ օրուան կը ձգուի. իսկ եթէ
սոյն բացակայութիւնը անձամբ գալու արգելող
ծանր հիւանդութեան պէս պատճառէ մը առաջ
եկած է, այն ժամանակ գործը կը յետաձգուի
մինչեւ ցապարինում:

Այս վերջին պարագային արգելիչ պատճառը
պէտք է ապացուցուի Թաղական Խորհրդոյ և Ա-
ւագերէցին սատրագրութիւնը կրող գրութեամբ:
իսկ Թաղական Խորհրդուրդ և Աւագերէց չը գրա-
նուած տեղեր երկու պատճառոր անձանց վկա-
յութիւնը առնուելով մօտակայ թաղին Թաղական
Խորհրդոյն վաւերացնել տալ կը բաւէ:

Եթէ ներկայ չեղողին բացակայութիւնը ար-
դելիչ պատճառաւ ըլլալուն ատեանը ինքնին հա-
մոզուած չըլլայ և կամ այս պատճառաւ յետա-
ձգուած օրը գարձեալ մի և նոյն կողմը ներկայ
չըլլայ և վերջապէս եթէ օրինաւոր պատճառաւ
բացակայութիւնը պաշտօնապէս չապացուցուի,
յայնամ ի բացակայութեան խնդիրը կը քննուի:

Եթէ բացակայն խնդրարկուն է այն ատեն
ինդիրը պարզապէս կը մերժուի առանց քննու-
թեան:

Իսկ եթէ բացակայն դատելին է, այն ատեն
ինդրարկուին պահանջիրին օրինաւոր և արգար
լինեն քննութեամբ ստուգուելէ վերջ որոշում
կը արուի:

Յօդ. ՅՅ. Ի բացակայութեան տրուած վճռի
գէմ պաշտօնապէս հաղորդուած թուականէն ըս-
կըսեալ երեսուն և մէկ օր պայմանաժամի մէջ
գիւտողութիւն կ'ընդունուի: Հաղորդուած թուա-
կանը ինչպէս նաև դիտողագրին ներկայացուած
թուականը այս պայմանաժամին մէջ չեն: Հեռա-


ՀԵՇ
2692

Հոր տեղ գանուղներուն համար պայմանաժամը
կերկարի այն համեմատութեամբ որ գծուած է
կոչագրելու պայմանաժամին համար (Տե՛ս Յօդ.
14):

Յօդ. 42. Պայմանաժամին մէջ եթէ դիտողու-
թիւն ներկայացուած չէ, այնուհետեւ այն վըճ-
ռագիրը ի ներկայութեան տրուած վճռագրի զօ-
րութիւն կունենայ:

Յօդ. 43. Դիտողագրերը պէտք է ստորագրո-
ւել ըլլան դատապարտեալ կողմէն և բացորոշ
ցուցնեն թէ ինչ պատճառներով վճիրը անարդար
կը տեսնուի:

Յօդ. 44. Դատապարտեալը իւր դիտողագիրը
անմիջապէս կը հաղորդէ իւր հակառակորդին կոչ-
նագրով՝ զոր ինք ևս կստորագրէ կանխաւ որոշեալ
օրը գալու համար: Նոյն օրը եթէ ինքը չի գոյ
դիտողութիւնը չեղեալ կը նկատուի. իսկ եթէ
ներկայանայ, այն ժամանակ պայմանաժամին մէջ
ներկայացուած կամ օրինաւոր ըլլալը ստուգուելէ
վերջ իւր դիտողութիւնները կը քննուին:



ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 45. Վերաքննութիւն պահանջելու պայ-
մանաժամը վճռագրին հաղորդուած թուականէն
սկսեալ 61 օր է, վճռագրին հաղորդուած օրը,
ինչպէս նաև վերաքննութիւն պահանջուած օրը
չը հաշուուիր: Հեռաւոր տեղ գտնուող անձանց
հաղորդուած վճռագրի դէմ վերաքննութեան
պայմանաժամը կերկարի ըստ 14^{րդ} Յօդուածի:

Յօդ. 46. Վերաքննութիւն պահանջող կողմը
իր այս ինդիրը կը մատուցանէ ի Կ. Պոլիս Ս.
Պատրիարքին կամ նորա Փոխանորդին և ի գա-
ւառս Առաջնորդին կամ Փոխանորդին:

Յօդ. 47 Ներկայացեալ խնդրագրին պատճէ-
նը վերաքննիչ ատենի գիւ անին կողմէն պաշտօնա-
պէս կը հաղորդուի միւս կողմին կոչնագրով մէկ-
տեղ, որոշեալ օրին խնդրագիրը և եթէ պատաս-
խանագիր տրուած է, այն ալ քննուելէ և խընդ-
րագրին օրինական ժամանակամիջոցին մէջ ներ-
կայացուիլը և օրինաւոր լինելը ստուգուելէ վերջ,
երկու կողմը հարցաքններով վճիրը կը հաստատէ
կամ կեղծանէ և նոր վճիր մը կուտայ. և եթէ
ինչ ինչ կէտերուն մասին վերաստին քննութեան
հարկ տեսնէ, ինդիրը նորէն Դատաստանական
Խորհրդոյ կը գարձնէ:

Յօդ. 48. Վերաքննիչ ատենի կողմաննէ ի բացակայութեան արուած որոշման դէմ գիտողագիր կրնայ մատուցուիլ վճռագրին հաղորդուելէն երեսուն և մէկ օրուան մէջ, և այս պարագային մէջ խնդիրը կրկին կը քննուի նոյն ատենի առջև այն եղանակու որ գծուածէ 41, 42, 43 և 44^{րդ} Յօդուածոց մէջ:

Յօդ. 49. Դատաստանական Խորհրդոյ մէջ ի կիր արկեալ դատավարական կանոնք վերաքննիչ Ատենի մէջ կը գործադրուին:

Յօդ. 50. Վերաքննիչ ատենի որոշմունք որ ի ներկայութեան տրուած են և անոնք որք թէս ի բացակայութեան տրուած ըլլալով անոնց դէմ գիտողագիր ներկայացուած չէ, վերջնական են:


Յօդ. 51. Թէ գիտողութեան և թէ վերաքըննութեան խնդրագիրը որոշեալ պայմանաժամէն վերջը չեն ընդունուիր, և սակայն եթէ պայմանաժամին մէջ մէկ կողմէն խնդիր ներկայացուած է, միւս կողմէն կարող է նոյնն ընել մինչև իսկ պայմանաժամը անցնելէն վերջը, եթէ տակաւին խնդիրը ի քննութեան է:


Ընկալեալ եւ հաստատեալ ի Խառն Ժողովոյ Սզգային Կեդրոնական Վարչութեան ի Խաներորդ առաջնիերորդ գումարման իւրում, ի 24 Ապրիլի 1893 ամի, եւ յանձնեալ ի գործադրութիւն:


ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՈԼՍՈՅ

Խ Ո Բ Ե Ֆ

10 Մայիս 1893







ՍԵՊԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ

ՍՆՏՈՒԿԻ

գիլ 3 դր.

ՄԱՀԱԳԻՒԹԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



MAL001941

